ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի Ս-ՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԸ մտնելու առիթով հեռագրով, նամակով թէ բերանացի շնորհաւորողներին խմբագրութիւնս յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը։

ԴՊՐՈՑԱԿԱՆ-ՎԱՐՁԱԿԱՆ ՐԵՖՈՐՄԻ խնդիրը, որ արծարծուած էր «Մուրճ» № 9 և 10, մեր ընթերցողներից շատերի ուշադրութիւնն է գրաւել։ Բերանացի և գրաւոր կերպով բազմաթիւ անձերից մեզ յայտնուած կարծիքները նպաստաւոր են արուած առաջարկութեան՝ ուսումնական ընդհանուր հոգաբարձութիւն կազմելու համար, ընդրողական սկզբունքի հիման վերայ։ Վերջին ժամին ստացանք նաև Զմիւռնիայից, պ. Տէր-Միրաքեանից մի գրաւոր կարծիք, որի հետ կը ծանօթացնենք յաջորդ համարում։

ՀՈՂԱՑԻՆ ԽՆԴԻՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ։ Թիֆլիսում շուտով սկսելու է մասնաժողովը, իսկական քաղաքաց. խորհրդատու պ. Մեդվեդևի նախագահութեամբ, պետական գիւղացիների հողային սահմանադրութեան նախագիծը կազմել այն գիւղացիների որոնք կենում են թէ պետական հողերի և թէ մասնաւոր հողերի վերայ։ Այսպիսով մենք կանգնած ենք մի շատ խոշոր ռեֆորմի դիմաց, ռեֆորմի, որը իւր հետևանքներով վերաբերելու է մեր երկրի գիւղական ազգաբնակութեան մեծագոյն մասին։ Ի նկատի առնելով, որ մօտ ապագայում կատարելու է այդ ռեֆորմը, մենք սկսեցինք մի շարք յօդուածներ խորագրով «Հողային խնդիրը Անդրկովկասում», որ դեռ ևս շարունակելի է մնացել։ Այժմ, երբ խնդիրը մօտեցել է իւր սկզբնաւորութեան, «Մուրճ»-ի մօտ համարներում մենք կը տանք շարունակութիւնը ընդհատուած յօդուածների, ներկայացնելով 1870 թուականի ռեֆորմը, որով որոշուեց ներկայումս գոյութիւն ունեցող նոյնպէս պետական, բայց այսպէս կոչուած կալուածատիրական գիւղացիների հողային վիճակը, ու ապա առանձին ուսումնասիրութիւններ կը նուիրենք պետական միւս գիւղացիների հողային կացութեան խնդրին։

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՑԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ հրատարակելու համար կազմում է մի մասնաժողով, որը իւր ժամանակին լայտարարութիւն կը տայ։

† ՋՈՆ ԼԵՄՈՒԱՆ։ Դեկտեմբերի 2-ին Պարիզում վախճանեց լայտնի հրապարակախօս, սենատոր և ակադեմիկոս Ջոն Լեմուան (ծն. 1815 թ.), զլխաւորապէս լայտնի իբրև տաղանդաւոր կուսող պապի աշխարհական իշխանութեան դէմ։

† Գ. Ա. ՇՈՒՄՊՖ (G. A, Schrumpf)։ Մահ մահի լեռնից։ Լոնդոնից, պ. Գ. Կիւլպենկեանը մեզ գրում է, որ «Մուրճ»-ի ընթերցողներին քաջ լայտնի Գ. Ա. Շռումֆը լանկարծամահ է եղել նոր տոմարով դեկտեմբերի 16-ին (4 դեկտեմբերի հին տոմարով)։ Շռումֆի մահով անհետանում է մի ուսումնական հայագէտ, որը փայլուն ապագայ էր խոստանում, աղգը կորցնում է մի եւրոպացի գիտնականի, որը իւր գիտութեան հետ կապել էր ջերմ զգացմունքներ հայ աղգի ներկայի և ապագայի համար։ «Մուրճ»-ը կորցնում է իւր բարեկամներից մէկին, որը իւր համակրութիւնը ապացուցեց մեր աշխատակից դրելով։ Մահը գտաւ նորան, երբ նա ապասում էր «Մուրճ»-ի ներկայ համարում տպող իւր մի գրախօսական լօդուածին և երբ նա պատրաստում էր մի ուրիշ գրուածք «Մուրճ»-ի համար։ Նա վախճանուեց նոյն այն օրը, երբ նա մի դասախօսութիւն էր արել հայերի մասին լեզուագէտների ընկերութեան մէջ, Լոնդոնում։

† ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ։ Դեկտեմբերի 19-ին (նոր տոմարով 31-ին) վախճանեց «Մշակ լրագրի խմբագիր Գրիգոր Արծրունին, 48 տարեկան հասակում։ Հանգուցեալի ահագին նշանակութիւնը ի նկատի առնելով, «Մուրճ»-ի ներկայ համարի Ներքին տեսութեան մէջ որոշում ենք Արծրունու դերը, մահուան լուրի առաջին տպաւորութիւնների ներքոյ, լուսալով որ ապագայում «Մուրճ»-ը կը տայ լիակատար ուսումնասիրութիւններ Արծրունու մասին։

«Մուրճ»-ի խմբագրութիւնը պակ դրեց հանգուցեալի տագաղի վերայ։

Թաղումը կատարուեց դեկտեմբ. 27-ին, կիւրակէ օր, մեզանում չեղած փառահեղութեամբ. պակների թիւը 300-ից անց էր, որ կրում էին ութ դիակառք. լուղարկաւորութեան մասնակցեց մի բազմութիւն, որ մեծ փողոցներում հասաւ մի քանի տասնեակ հազար հոգու, որոնց մէջ բազմաթիւ պատգամաւորներ ուրիշ քաղաքներից. ճառախօսների թիւն էր Վանքի Մայր եկեղեցում երկու, Խօջիվանքի դերեզմանատունը

տասնհինգ, հոգի, չը հաշւելով մի տասնեակ ուրիշներին, որոնց հերթ չը հասաւ. Ճառախօսների թւումն էր նաև ամսագրիս խմբագիրը։ Այդ հացի մասին տեղեկութիւններ տպւեցին վրաց «Իւերիա» լրագրում (առ 30 և 31 դեկտ. 1892 թ.) և դորանից մի քաղւածք «Տարազ»-ում (№ 1 1893 թ.)

ԼՈՒԻ ՊԱՍՏԵՕՐԻ 70-ԱՄԵԱԿԸ։ Նոր (եւրոպական) տոմարով դեկտեմբերի 27-ին (հին տոմարով 15-ին) լրացաւ ֆրանսիացի Լուի Պաստեօրի ծննդեան 70-ամեակը։ Ամբողջ լուսաւոր աշխարհը, գիտնական ընկերութիւնների միջոցով, տօնեց ներկայիս ամենահռչակաւոր գիտնական բնագէտին, որի արած գիւտերի համար մարդկութեան բարերարի անունն է վաստակել։ Պաստեօրի անունը կապւած է միկրոբների, հին աշխարհին այդ անյայտ միկրոսկոպիկական կենդանիների հետազօտութեան և, իբր դորա հետևանք՝ եռման պրոցեսի պատճառների, չերամի որդնի հիւանդութիւնների, գինու քացախման պրոցեսի, թռչունների խոլերա և սիբիրական ախտ կոչւած հիւանդութիւնների, կատաղած անասնից թունաւորւելով յառաջացած հիւանդութեան հետազօտութեան հետ, և այդ ամենի դէմ գտած միջոցների գիւտերի հետ։ Պաստեօրին տօնելու համար ընդհանուր մարդկութիւնը մասնակցեց նաև Թիֆլիսը՝ Գիւղատնտեսական և բժշկական ընկերութիւնների միջոցով, ուր կարդացւեցին բազմաթիւ զեկուցումներ մեծ գիտնականի կեանքի և գլխաւորապէս ծառայութիւնների մասին։

«Մուրճ»-ի ընթերցողներին Պաստեօրը յայտնի է մեր աշխատակից պ. Ս. Բալասանեանի յօդւածով «Միկրոբներ» վերնագրով, որ տպւեց անցեալ 1891 թ. համարներում. Բայց այն տօնը, որին այս ամիս մասնակցեց ամբողջ գիտնական աշխարհը, յարմար առիթ է տալիս Պաստեօրի վաստակների մասին մեր ընթերցողներին մի ամփոփ գրւածք ներկայացնել, որ և կ՚անի գալ ամսին, 1893 թ. յունւարի №-ում, պ. Ս. Բալասանեանի ձեռքով։

† ԻՒԱՆԷ ԿԵՐԵՍԵԼԻՁԷ։ Դեկտեմբերի 22-ին վախճանւեց Թիֆլիսում վրաց ժուռնալիստիկայի վետերանը Իւանէ Կերեսելիձէն, 63-ամեայ հասակում։ Նա հիմնել էր՝ «Ցիսկարի» (Արշալոյս) 1857-ին և «Գութնիս դեդա» (մաճկալ) 1868, այժմ այլ ևս գոյութիւն չունեցող պարբերական հրատարակութիւնները։

«ԱԶԳԻ ԵՐԳԻՉԸ» պ. Ե. Մաղաքեանի յօդւածի շարունակութիւնը կը տպւի 1893 թ. յունւարի № ում։

ՎԼՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 11-ի մէջ «Առանց դաւանանքի» (մայիսի 21-ի վերջում) տպած է «կը պատուիրեմ այդ անդրին իսկոյն և եթ ուղարկեն և այլն։ Պէտք է լինի՝ կը պատուիրեմ այդ պատկերը» և այլն։

Գրախօսութեան մէջ պ. Լ. Մ.-ի լօզուածում մի տեղ տպած է «պէտք է դէմ դնալ գեղարուեստի օրէնքներին», պէտք է ուղղել՝ «չը պէտք է դէմ դնալ...» մի այլ տեղ տպած է «պառկած», պէտք է ուղղել՝ «պատկած»։

Պր. Մաղաթեանի լօզուածում «Աղգի երգիչը» էջ 1663 տող 16 տպուած է 1849—51, պէտք է ուղղել՝ 1850—51։

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ